ՊՈԶՈԵՎ (ՊՈԶՈՅԱՆ) ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶՆՎԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՎԱՆԴՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ Կ. Ռ.

1887թ. սկսած, երբ Անդրկովկասի քրիստոնյա բնակչությունը մասնակից դարձվեց Ռուսաստանում իրականացվող ամենամյա զորակոչին,[1] ցարական զինված ուժերում զգալիորեն աճեց հայազգի զինվորների և սպաների թիվը: Ճիշտ է, Ռուսաստանի ռազմական պատմության մեջ հայտնի էին բազմաթիվ հայազգի զորահրամանատարների անուններ, սակայն, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում էր, որ ցարական բանակի մի քանի տասնյակ հայազգի գեներալների և մոտ 500 այլ բարձրաստիճան սպաների շնորհիվ ռուսական բանակի գեներալիտետի և սպայության կազմում հայազգի գեներալներն ու բարձրաստիճան սպաները ներկայացան յուրահատուկ որակական բարձր հատկանիշներով օժտված հավաքական խմբի տեսքով: Հայազգի գեներալներ Արտեմի Սողոմոնի Վարտանովի (Վարդանյան), Աբիսողոմ-Աբել Իվանի Մգեբրովի, Տիգրան Դանիելի Արյուտինովի (Հարությունյան), Իվան Սերգեյի Բաղրամովի (Բաղրամյան), Ստեփան Գերասիմի Քալանթարովի (Քալանթարյան[2]), Նիկոլայ Մեժլումի Մելիք- Շահնազարովի[3], Հակոբ Գերասիմի Բագրատունու[4], Թադևոս Արիստակեսի Տեր-Օսիպյանցի[5], Լևոն[6], Ռուբեն, Գեորգի[7] Ավետիքի Պոզոնների (Պոզոյան) և այլոց ինքնանվեր ու հսկայածավալ աշխատանքի, օրինակելի ծառայության շնորհիվ էր նաև, որ Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական զինուժը բազմաթիվ մեծ ու փոքր հաղթանակներ տոնեց՝ նոր և փառավոր էջեր բացելով Ռուսաստանի հարուստ ավանդույթներ ունեցող ռազմական արվեստի պատմության մեջ:

Առաջին աշխարհամարտը զորավարներով հագեցնող Լազարյանների, Ղորղանյանների, Տիգրանյանների, Յուզբաշյանների, Արղությանների, Դոլուխանովների և այլ գերդաստանների շարքում պատվավոր տեղ ունի Թիֆլիսի նահանգի Ախալցխա քաղաքում բնակվող Պոզոնների ազնվական ընտանիքը: Աշխարհամարտին տալով երեք գեներալ՝ Պոզոն ընտանիքը ռազմական աշխարհին ներկայացավ որակական նոր հատկանիշներով՝ մեկընդմիշտ ապացուցելով, որ զինվորականի ճակատագրի ընտրությունը ոչ միայն սոսկ ազնվականությանը բնորոշ վարքագծի դրսևորում էր, այլև Ռուսաստանի ռազմական շինարարության շարունակական գործընթացում մեծ աշխատանքներ

---

[1] **Головин Н. Н.,** *Военные усилия России в мировой войне, М., 2001, с. 17.*

[2] *Список Генералов по старшинству, Петроград, 1914, с. 369, 398, 779, 747, 722.*

[3] *Список Генералов по старшинству, Петроград, 1916, с. 180.*

[4] Պատմա-բանասիրական հանդես, 1997, N 1, էջ 41:

[5] Ռուսաստանի Պետական ռազմապատմական արխիվ (այսուհետև՝ ՌՊՌԱ), ֆ. 409, ց. 2, գ. 29920, թ. 4:

[6] *Список Генералов по старшинству, Петроград, 1916, с. 39.*

[7] *Список Генералов по старшинству, Петроград, 1914, с. 157, 164.*

կատարելու պատրաստակամություն ու կարողություն: Տասնյակ տարիներ Ռուսատանի զինված ուժերում ծառայելով՝ Լևոն, Ռուբեն և Գեորգի Պոզոն եղբայրներն իրենց ոգու ավյունն ու մտքի անսպառ պաշարները ներդրեցին կայսրության բանակաշինության գործում: Այս դժվարագույն գործընթացում Պոզոն եղբայրները սխրագործություններով հարուստ ճանապարհ անցան, ինչի մասին վկայում է նրանց ծառայողական թերթիկներում պարգևների ապշեցուցիչ առատությունը:

Եղբայրներից ավագը՝ Լևոնը, ծնվել է 1855 թ. հունվարի 6-ին: Կրթություն է ստացել Մոսկովյան 2-րդ ռազմական գիմնազիայում, Միխայլովյան հրետանային ուսումնարանում, Միխայլովյան հրետանային ակադեմիայում (ավարտել է առաջին կարգի որակավորումով): 1872 թ. օգոստոսի 9-ից անցնելով զինվորական ծառայության՝ Լևոն Պոզոնը քայլ առ քայլ հաղթահարեց զինվորական աստիճանակարգը և 1913 թ. մայիսի 31-ին արժանացավ գեներալ-լեյտենանտի զինվորական կոչման: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը նա զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, մասնակցել է մի քանի ռազմարշավների, արժանացել բազմաթիվ շքանշանների և պարգևների:

Լևոն Պոզոնը աշխարհամարտը դիմավորեց Թուրքեստանյան ռազմական օկրուգի հրետանու պետի պաշտոնում: Մինչև 1915 թ. մայիսը նա մեծ աշխատանք կատարեց Ռուսական կայսրության տնտեսության ռազմականացման և համընդհանուր զորակոչի հավուր պատշաճի կազմակերպման գործընթացներում, որոնց համար էլ արժանացավ նախ Սպիտակ արծվի[8] և ապա՝ Ս. Աննայի 1-ին աստիճանի շքանշանի[9]: 1915 թ. մայիսի վերջերին, երբ Արևմտյան ճակատի հյուսիսային հատվածում 1-ին և 68-րդ աշխարհազորային բրիգադներից ձևավորվեց 106-րդ հետևակային դիվիզիան, Լ. Պոզոնը տեղափոխվեց Բոտնիկական նեղուցի շրջան և իր զորամիավորումով հաշվառվեց ռուսական 42-րդ բանակային կորպուսի կազմում: Սերտ համագործակցելով 106-րդ հետևակային դիվիզիայի կազմում գտնվող 421-րդ, 422-րդ, 423-րդ և 424-րդ հետևակային գնդերի հետ[10], Լ. Պոզոնն իրականացրեց Պետրոգրադի պաշտպանությունը Ֆինլանդիայի շրջանից: 1916 թ. ռազմարշավի ընթացքում նա դարձյալ զորավարական ակնառու հմտություն ցուցաբերեց, որի շնորհիվ էր նաև, որ ռուսական 106-րդ հետևակային դիվիզիան մեծ հաջողությունների հասավ: 1916 թ. ռազմական գործողություններում կատարած ներդրման համար Լ. Պոզոնն արժանացավ Ս. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշանի[11]: Պատերազմի ամբողջ ընթացքում Լ. Պոզոնը ցուցաբերեց բարոյակամային բարձր հատկանիշներ, զորավարական հարուստ գիտելիքներ և հմտություն:

Աշխարհամարտին ակտիվ մասնակցեց նաև Ռուբեն Պոզոնը, որը մասնակցեց և՛ Կովկասյան, և՛ Արևմտյան ճակատներում ծավալված մարտական մի շարք գործողությունների: Ռ. Պոզոնը ծնվել է 1856 թ. նոյեմբերի 16-ին:

---

[8] ՌՊՌԱ, ֆ. 409, ց. 1, գ. 76053, թ. 1-6:

[9] *Русские ведомости, 28. V. 1915.*

[10] **Залесский К. А.**, *Первая мировая война. Биографический энциклопедический словарь, М., 2000, с. 499.*

[11] ՌՊՌԱ, ֆ. 409, ց. 1, գ. 76053, թ. 6:

Կրթություն է ստացել Մոսկովյան 2-րդ ռազմական գիմնազիայում, Միխայլովյան հրետանային ուսումնարանում (ավարտել է առաջին կարգի որակավորումով), սպայական հրետանային դպրոցում (դարձյալ ավարտել է հաջողությամբ): 1875 թ. օգոստոսի 12-ից նա զինվորական ծառայության մեջ էր, իսկ 1915 թ. օգոստոսի 11-ին ստացել է գեներալ-մայորի զինվորական կոչում: Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, մասնակցել է ռազմական գործողությունների, արժանացել է բազմաթիվ շքանշանների և պարգևների: Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Ռ. Պոզոևը գլխավորում էր 20-րդ հրետանային բրիգադի 1-ին դիվիզիոնը, որի գլուխ անցած էլ 1914 թ. հոկտեմբերի 21-ին անցավ թուրքական սահմանը և մինչև 1915 թ. մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում թեժ ու արյունալի մարտեր մղեց Կովկասյան ճակատում՝ բացառապես տանելով հաղթանակներ: Այդ ժամանակահատվածում Արևմտյան ճակատի հարավ-արևմտյան հատվածում սպասվելիք լայնածավալ ռազմական գործողություններում հաջողության հասնելու ակնկալիքով ռուսական հրամանատարությունն այնտեղ կենտրոնացրեց ռուսական զինուժի լավագույն մի քանի զորամիավորումներ: Ընտրյալների թվում էր նաև Ռ. Պոզոևի զորամիավորումը: 1915 թ. մայիսի կեսերից մինչև սեպտեմբերի 11-ը Ռ. Պոզոևի դիվիզիոնը մեկը մյուսի հետևից թեժ և հակառակորդի համար կորուստներով հարուստ մարտեր մղեց Գալիցիայում, Խոլմյան ու Գրոդնենսկյան նահանգների բազմաթիվ բնակավայրերում: Գրեթե միշտ լինելով դիրքերում՝ Ռ. Պոզոևը հաճախ անձամբ էր հրանոթից կրակ բացում թշնամու վրա՝ քաջալերելով իր զինվորներին:

1915 թ. սեպտեմբերի 11-ին մարտերում տարբեր աստիճանի վերքեր ստացած և հյուծված Ռ. Պոզոևին առողջական հետագա բարդություններից զերծ պահելու համար հոսպիտալացնում և էվակուացնում են մարտի դաշտից: Մարտերում հրամանատարական բարձր որակներ ցուցաբերելու համար 1916 թ. հունվարի 8-ին Ռ. Պոզոևը պարգևատրվեց սրերով և ժապավենով՝ ի լրումն նախօրոք ստացած Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի: Ապաքինվելուց անմիջապես հետո նա վերադարձավ գործող բանակ և վերստանձնեց իր դիվիզիոնի հրամանատարությունը:

1916 թ. ռազմարշավի պլանները մշակելիս ռուսական Ռազմակայանը մեծ տեղ հատկացրեց նաև ռուսական 5-րդ բանակի կազմում գտնվող 53-րդ հրետանային բրիգադին, որի առջև դրված խնդիրների հաջող իրականացումը պահանջում էր, որ բրիգադը ղեկավարի ռազմական գիտելիքներով հարուստ և փորձված հրամանատար, քանի որ Առաջին աշխարհամարտի ամբողջ ընթացքում Ռուսաստանն իր հակառակորդներին զիջում էր և՛ ռազմամթերքով, և՛ տեխնիկայով[12]: Այս պայմաններում տաղանդավոր ու հմուտ զորահրամանատարի արագ կողմնորոշմամբ արդյունավետորեն սահմանվում էին ուժերի նպատակային դասավորությունը, արկերի արձակման անհրաժեշտությունն ու պարբերականությունը՝ կախված տվյալ մարտի նշանակությունից: 1916 թ. մարտի 27-ին երկար քննարկումներից հետո 5-րդ բանակի հրամանատարի թիվ 325 հրամանով Ռ.

[12] *Горлицкая операция. Сборник документов и материалов, М, 1941, с. 376-386.*

Պոզոևը նշանակվեց 53-րդ հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոնում և մինչև 1916 թ. մայիսի 12-ը պատվով իրականացրեց իր բրիգադի առջև ծառացած բոլոր խնդիրները: Գլխավոր հրամանատարությունը բարձր գնահատելով հայազգի գեներալի զորավարական կարողություններն ու գիտելիքները՝ նրան նշանակեց ևս մեկ պատասխանատու օղակում՝ 6-րդ հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոնում: Այս անգամ Ռ. Պոզոևի բրիգադը պետք է աջակցեր ռուսական 6-րդ հետևակային դիվիզիայի գործողություններին:

1916 թ. մայիսի 30-ից մինչև 1916 թ. հունիսի 28-ը 6-րդ հրետանային բրիգադը Մյադել և Նարոչ լճերի ավազաններում դիպուկ և նպատակային կրակով հակառակորդին մեծ կորուստներ պատճառեց, ինչի շնորհիվ էլ ռուսական 6-րդ հետևակային դիվիզիան ծավալվեց և ռազմավարական նշանակության դիրքեր զբաղեցրեց: Ռուսական հետևազորը դիրքային առավելություն ձեռք բերելուց հետո ձեռնամուխ եղավ Լիտվինի լճից մինչև Նարոչ լիճն ընկած տարածքի գրավմանը: 1916 թ. հունիսի 29-ից մինչև օգոստոսի 12-ը նշված հատվածում թեժ և արյունալի մարտեր բռնկվեցին: Կրկին 6-րդ հրետանային բրիգադի մարտկոցների շնորհիվ ռուսական հետևազորը թշնամուց ռազմավարական մեծ նշանակության տարածքներ խլեց: Այս կռիվներում հակառակորդի կորուստները բազմակի ավելի էին: Ռ. Պոզոևի բրիգադի մղած մարտերը ծանր էին նաև 1916 թ. օգոստոսի 12-ից մինչև դեկտեմբերի 4-ը Չերնյատի լճից մինչև Նարոչ լիճն ընկած տարածքում, բայց շնորհիվ հետևակի և հրետանու սերտ փոխկապակցված գործողությունների՝ ռուսական զորքը բազմիցս կարողացավ խուսափել պարտությունից: 1916 թ. դեկտեմբերի 4-ից մինչև 1917 թ. մայիսի 15-ը 6-րդ հրետանային բրիգադը, տեղակայված լինելով Դոլժի լճից Նարոչ լիճն ընկած տարածքում, մեծապես նպաստեց ճակատային այս հատվածում ռազմական իրավիճակի կայունացմանը: Բրիգադի արդյունավետ գործողություններն անմիջականորեն պայմանավորված էին նրա հրամանատար Ռ. Պոզոևի զորավարական տաղանդով: 1916 թ. ռազմարշավի ընթացքում զորավարական բարձր հատկանիշներ դրսևորելու համար Ռ. Պոզոևն արժանացավ Ս. Ստանիսլավի 1-ին աստիճանի շքանշանի՝ սրերով հանդերձ[13]:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ Ժամանակավոր կառավարության ձեռնարկած ներքաղաքական մի շարք քայլեր սկսեցին բացասաբար անդրադառնալ Արևմտյան ճակատի վրա, նախկին ցարական բանակի բարձրաստիճան բազմաթիվ սպաներ ու գեներալներ տարբեր պատճառներով պաշտոնաթող եղան: Նրանց թվում էր նաև առողջական վիճակի անբավարարության պատճառով 1917թ. սեպտեմբերի 7-ին թոշակի անցած գեներալ-մայոր Ռուբեն Պոզոևը[14]:

Առաջին համաշխարհային պատերազմում ռուսական զինուժի որոշ հաղթանակներ պայմանավորված էին նաև Պոզոև եղբայրներից կրտսերի՝ Գեորգիի հրամանատարական տաղանդով: Գեորգի Պոզոևը ծնվել է 1858 թ. հոկտեմբերի 20-ին: Կրթություն է ստացել Մոսկովյան 2-րդ ռազմական

[13] ՌՊՌԱ, ֆ. 409, ց. 1, գ. 171694, թ. 15-22:
[14] Նույն տեղում, թ. 1-9:

գիմնազիայում, Ալեքսանդրովյան 3-րդ ռազմական ուսումնարանում (ավարտել է առաջին կարգի որակավորումով), սպայական հրետանային դպրոցում (դարձյալ ավարտել է հաջողությամբ):

1876 թ. օգոստոսի 16-ից զինվորական ծառայության անցած Գ. Պոզոևը շարունակեց և հարստացրեց ավագ եղբայրների փառավոր մարտական ավանդույթները: Անբասիր ծառայության և հաջողությունների համար նա պարբերաբար արժանանում էր հրամանատարության ուշադրությանն ու գնահատանքին: Գ. Պոզոևը 1915 թ. մայիսի 8-ին դարձավ գեներալ-մայոր: Մինչև Առաջին աշխարհամատի սկիզբը նա ցարական բանակում զբաղեցրել է հրամանատարական բարձր պաշտոններ, կատարել է հատուկ առաջադրանքներ և արժանացել բազմաթիվ շքանշանների ու պարգևների: Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո Գ. Պոզոևը, ռուսական 3-րդ գրենադերական հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիոնի գլուխ անցած, ժամանեց Խոլմ քաղաք և հաշվառվեց գործող բանակի կազմում: Անմիջապես մտնելով մարտական գործողությունների մեջ՝ Գ. Պոզոևի դիվիզիոնը օգոստոսի 13-ին ու 14-ին Զամիտե և Զամոստյե բնակավայրերի մատույցներում ընթացող կատաղի մարտերում շատ քիչ կորուստների գնով ապահովեց ռուսական զորքի հաջողությունները: Այս մարտերում Գ. Պոզոևը վիրավորվեց և հոսպիտալացվեց: Ապաքինվելուց հետո Գլխավոր հրամանատարությունը նրան առաջարկեց առողջական վիճակի հետագա բարդություններից խուսափելու համար ծառայության անցնել թիկունքում, սակայն այդ բարյացակամ առաջարկը հայազգի գեներալը մերժեց և վերադարձավ ճակատ:

Մինչև 1915 թ. ապրիլի 27-ը 3-րդ գրենադերական հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիոնը դիրքային կռիվներ մղեց Նիդ գետի շրջանում[15] և արդյունավետ գործողություններով նպաստեց, որ ռուսները գերեն 68 սպայի և 4000 զինվորի[16]: Գ. Պոզոևի հաստատակամության և վճռականության շնորհիվ 2-րդ դիվիզիոնը հաջողությամբ իրականացրեց նաև Օպատեյան մարտական գործողությունների ընթացքում իր վրա դրված առաջադրանքը: Այս ժամանակահատվածում, երբ գերմանա-ավստրիական հրետանին բացարձակ քանակական առավելություն ուներ ռուսական հրետանու նկատմամբ, ռուսական զորքերի որևէ նույնիսկ ոչ մեծ հաղթանակը նշանակալի ներդրում էր Արևմտյան ճակատի կայունության և, ընդհանրապես, գոյության խնդրում: 1915 թ. հունիսի 12-ից մինչև հունիսի 28-ը Գլինյան բնակավայրի, Տարլովի, Իդալինի, Սանդոմիրի և Պոդլիպեի տարածքներում ռուսական 3-րդ գրենադերական հրետանային բրիգադի 2-րդ դիվիզիոնի մղած թեժ մարտերի հետևանքով ճակատում արագ փոփոխվող իրադրությունը կայունացվեց, իսկ Գ. Պոզոևի անմիջական նախաձեռնությամբ իրականացված ռազմական գործողության շնորհիվ ռուսական հետևակի համար փրկարար ճանապարհ բացվեց՝ բարձրացնելով բանակի մարտական ոգին:

Գ. Պոզոևի դիվիզիոնի գործողություններն արդյունավետ էին նաև 1915 թ. հունիսի 29-ից մինչև սեպտեմբերի 10-ը Խրուսլյան, Նովո Գուրա, Յաուլիկա, Լուբնովսկա, Նեզաբիտով, Լուբկի, Վոլյա, Պրժեբի, Սլովսկա, Յանով, Կլոդա,

[15] Նույն տեղում, գ. 173103, թ. 23-26:

[16] *Кавказское слово, 16. XII. 1914.*

Բոբվիսկ, Օլիմպով, Վիսոկոե, Սուխոդոլ բնակավայրերի և Պրոցանեց ու Մեժարեչե տեղանքների մատույցներում ծավալված մարտական գործողությունների ընթացքում: Գեներալ-մայոր Գ. Պոզոնի շնորհիվ էր նաև, որ ռուսական զինուժը, շրջանցիկ զորաշարժեր կատարելով, գրավեց հակառակորդի շարժման ուղղության վրա գտնվող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մի շարք դիրքեր՝ պահպանելով իր մարտունակությունը: Իր ենթակայության տակ գտնվող դիվիզիոնը հաջողությամբ ղեկավարելու և զինվորների մարտական ոգին բարձր պահելու համար 1915 թ. օգոստոսի 3-ին Գ. Պոզոնն արժանացավ սրերի և ժապավենի՝ վաղօրոք ստացած Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանին ի հավելում:

Բանակի գլխավոր հրամանատարությունը, նկատելով, որ հայազգի գեներալը կարողանում է ամեն մի իրավիճակում ամենաարդյունավետ ելքը գտնել, 1915 թ. նոյեմբերի 14-ին նրան վստահեց 3-րդ գրենադերական հրետանային բրիգադի հրամանատարությունը: Գ. Պոզոնը այս անգամ ևս հուսախաբ չարեց իր վերադասին: Մինչև 1916 թ. հունվարի 1-ը Սերվեչ գետի վրա Գ. Պոզոնի բրիգադի մղած արդյունավետ մարտերը և՛ ռուսական Գլխավոր հրամանատարությանը, և՛ Ռազմակայանին ցույց տվեցին, որ նա կարող է էլ ավելի պատասխանատու հրամանատարական պաշտոններ զբաղեցնել: Արևմտյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատարի՝ 1916 թ. հունվարի 4-ի թիվ 2773 հրամանով գեներալ-մայոր Գ. Պոզոնը նշանակվեց 46-րդ հրետանային բրիգադի հրամանատարի պաշտոնում (46-րդ հրետանային բրիգադը իր միավորումների թվով գերազանցում էր 3-րդ գրենադերական հրետանային բրիգադին): Նրա նշանակումը հատկապես Արևմտյան ճակատում պատահական չէր, քանի որ այդ պահին խիստ կարևորվել էր այդ ճակատի ռազմական կայունության հարցը, և միայն Գ. Պոզոնի նման հմուտ զորավարներն էին ի վիճակի դա ապահովելու:

1916 թ. հունիսի 20-25-ը Սերվեչ գետի վրա ծավալված մարտերում առանձնակի քաջություն և զորավարական մեծ կարողություն ցուցաբերելու համար 1916 թ. օգոստոսի 10-ի թիվ 3176 հրամանով հայազգի գեներալը արժանացավ յուրաքանչյուր զինվորականի համար բաղձալի՝ Ս. Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշանի: 46-րդ հրետանային բրիգադի հրամանատարի, 25-րդ բանակային կորպուսի տեսչի, 46-րդ հետևակային դիվիզիայի հրամանատարի, 33-րդ բանակային կորպուսի տեսչի պաշտոնները զբաղեցնելուց հետո, 1918 թ. հունիսի 19-ին Գ. Պոզոնը նշանակվեց Բելոմորյան շրջանային հրետանային վարչության պետի օգնական, սակայն 8 օր անց, կապված տարիքի և առողջական վիճակի հետ, թոշակի անցավ[17]:

Լևոն, Ռուբեն և Գեորգի Պոզոնները ցույց տվեցին, որ իսկական զորապետներ էին, նվիրյալներ, որոնց ավանդը Ռուսաստանի ռազմական պատմության մեջ զգալի է: Ծնված և սնված լինելով զինվորականի ընտանիքում՝

[17] ՌՊՌԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 173103, թ. 3-21, 25

նրանք պատերազմն ընկալում էին որպես պատվի գործ, որը ծառայում է ընդհանուր հայրենիքի անվտանգությանը: Նրանց ամեն մի ձեռնարկում արդյունավետ ավարտ էր ունենում, որովհետև ազգային ոգուն ու տաղանդին զումարվել էին դաստիարակության ու կրթության նպատակաուղղվածությունը՝ տարիների ընթացքում դառնալով իմաստուն փորձ, անկոտրելի կամք և անսպառ եռանդ: Այսքանով էլ Պոզոններն առանձնանում էին Ռուսաստանի զինված ուժերի գեներալների շարքում:

Ռուսական կայսերական զինված ուժերի պատմությունը Հոկտեմբերյան հեղափոխությամբ ավարտվեց: Ցարական բանակի բարձրաստիճան մի շարք սպաներ ու գեներալներ ներքաշվեցին Ռուսաստանում օրեցօր թեժացող քաղաքացիական պատերազմի հորձանուտները: Սակայն, Պոզոնները, հետամուտ իրենց արյան կանչին, այս անգամ արդեն իրենց ռազմական կարողություններն ու գիտելիքները ներդրեցին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման գործում[18]:

ВКЛАД АРМЯНСКОЙ ДВОРЯНСКОЙ СЕМЬИ ПОЗОЕВЫХ (ПОЗОЯН) В ПЕРВУЮ МИРОВУЮ ВОЙНУ

ПАХЛЕВАНЯН К.Р.

Резюме

В преддверии первой мировой войны в составе российского офицерства и генералитета значительно возросло число генералов и офицеров армянской национальности. Многие армянские семьи посвятили себя воинской службе, в их числе особое место занимает армянская дворянская семья Позоевых (Позоян). Братья-генералы Левон, Рубен и Георгий Позоевы, прослужив более 40 лет, внесли большой вклад в дело становления и укрепления российских вооруженных сил.

После Октябрьской революции были ликвидированы российские царские вооруженные силы. Некоторые офицеры и генералы царской армии, в том числе Рубен и Георгий Позоевы вышли в отставку. И если многие из них были вовлечены в гражданскую войну, то семья Позоевых внесла свою посильную лепту в организацию вооруженных сил Первой Республики Армения.

[18] Հայաստանի Հանրապետության Պատմության Պետական Կենտրոնական Արխիվ (ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 290, ց. 1, գործ 9, թ. 14: